Հավելված
համայնքի ղեկավարի
15-ը մարտի 2023թ-ի
թիվ 47-Ա որոշման

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 140-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱԾԿԱԳԻՐ 10-003-0002-0097 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 300,0 ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԵՎ ԱՎԵԼ ՔԱՐՏԵԶԱՎՈՐՎԱԾ 282 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 65-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 2008թ.-ի հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք բնակավայրում գտնվող՝ ծածկագիր 10-003-0002-0097, բնակարանը հասցեավորել որպես Վայք համայնք, Վայք քաղաք, Իսրայել Օրի 1-ին նրբանցք թիվ 4 բնակելի տուն:
2.Սույն որոշման առաջին կետում նշված օրինական 500,0 քմ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 300,0 քմ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը համարել այն օգտագործող Վալերա Նկարի Ավագյանի սեփականությունը:
3.Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 500,0 քմ և նրան կից ավել օգտագործվող 300,0 քմ սահմանազատված հողամասերը, չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:
4.Նշված հասցեում գտնվող բնակելի տունը և օժանդակ կառույցները, որոնք կառուցվել են մինչև 2001 թվականը, ճանաչել օրինական:
5. Նշված հասցեում ավել քարտեզավորված 282 քմ հողամասը հետ վերցնել և համարել համայնքային սեփականություն:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից՝ հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի չափագրման փաստացի արդյունքներ՝ ըստ Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյանի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ